



# Հաշմանդամ ամերիկացիների եւ Օլմսթեդի որոշման ինտեգրացիան

Արդյո՞ք հաշմանդամ ամերիկացիների վերաբերյալ որոշումը (ADA) հնարավորություն է ընձեռում հոգեբուժական խնդիրներ ունեցողներին ապրել համայնքային միջավայրերում:

Այո, կան մի շարք դաշնային եւ նահանգային օրենքներ, որոնք հնարավորություն են ընձեռում մարդկանց օգնություն ստանալ տնային եւ համայնքային պայմաններում: Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքը հենց այդպիսի դաշնային օրենք է: Ըստ օրենքի նահանգը եւ համայնքները պարտավոր են ծառայություններ մատուցել քաղաքացուն ելնելով նրա կարիքներից: Այս է օրենքի ինտեգրման մանդատը:

## Ինչ է նշանակում «առավել հարմարեցված պայմաններ» ձեւակերպումը

Սա այն վայրն է, որտեղ հոգեկան խնդիրներ ունեցողները կարող են հնարավորինս ակտիվ կերպով շփվել հաշմանդամություն չունեցողների հետ: Հատուկ պայմաններով բնակարանները «առավել հարմարեցված պայմաններ»-ի օրինակ է:

Դատական ի՞նչ գործընթացի արդյունքում է որոշվել ապահովել համայնքում ապրելու իրավունքը:

Օլմսթեդի դատական գործում ներգրավված էին Ջորջիա նահանգից երկու կանայք, որոնք երկուսն էլ մտավոր հետամնացության խնդիր ունեին: Նրանք երկուսն էլ ապրում էին նահանգային ֆինանսավորում ունեցող բնակավայերում, չնայած նրան, որ վերջիններիս բժիշկները գտնում էին, որ նրանք կարող են բնականոն կերպով ապրել համայնքներում: Կանայք որոշեցին դիմել դատարան, պնդելով, որ ստեղծված իրավիճակում խախտվում է հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքով սահմանված իրենց իրավունքը: 1999 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Բարձր դատարանի կողմից ընդունվեց Օլմսթեդի որոշումը, ըստ որի այս երկու կանանց հնարավորություն ընձեռվեց բնակություն հաստատել համայնքային միջավայր

Օլմսթեդի որոշմամբ ի՞նչպիսի պարտավորություններ են սահմանվում նահանգային եւ շրջանային մակարդակներում

Ամերիկայի Միացյալ Նահանգների Բարձր դատարանը որոշեց, որ նահանգները պետք է ծառայություններ մատուցեն հաշմանդամության հետ խնդիրներ ունեցողներին համայնքային մակարդակում, հետեւյալ դեպքերում.

- Եթե համայնքային ծառայությունները կարող են ապահովել քաղաքացու կարիքները
- Եթե քաղաքացին դեմ չէ համայնքային ծառայություններին
- Եթե հնարավոր է պատշաճ կերպով տրամադրել ծառայությունները, հաշվի առնելով առկա ռեսուրսները եւ այլ հաշմանդամների կարիքները

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել այստեղ.  
[http://www.ada.gov/olmstead/q&a\\_olmstead.htm](http://www.ada.gov/olmstead/q&a_olmstead.htm)

## Ի՞նչ պիսին է լրացուցիչ ծառայությունների մատչելիությունը ինտեգրված համակարգում

Կալիֆորնիայում գործում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների «հոգատարության համակարգ»-ը: Այս համակարգի պայմաններում յուրաքանչյուր կարիքավորի հետ աշխատող պատասխանատու կա, որի պաշտոնն անվանվում է «հոգեկան առողջության հարցերով անձնական ծառայությունների համակարգող»: Ծառայությունները կախված են մարդու կարիքներից եւ նպատակներից, որոնց շարքում են.

- Տնային հարցեր, ճգնաժամային իրավիճակներ, անցումային կամ մշտական
- Գորշընկերների աջակցություն համակարգի ավելի փորձառու աշխատակիցների կողմից
- Ամբողջական համագործակցային համակարգը (FSP) ներռում է թիմային աշխատանք կարիքավորին ծառայություններ տրամադրումը 24 ժամյա ռեժիմով, շաբաթվա 7 օրերի ընթացքում, այդ թվում նաեւ ճգնաժամային իրավիճակներում

## Արդյոք այս մադաստը տարածվում է բոլորի՞ վրա

Հաշմանդամության խնդիրներ ունեցող անձինք, այդ թվում նաեւ հոգեբուժական ծառայությունների կարիք ունեցողները, ովքեր գտնվում են, կամ կանգնած են հասարակությունից առանձնացվելու վտանգի առջեւ կարող են իրավունքներ ունենալ օրենքի եւ Օլսթեդի որոշման հիմքերով: Հասարակությունից առանձնացված ասելով, նկատի ունենք հաստատությունները, որոնք ծառայում են բացառապես մտավոր հաշմանդամություն ունեցողներին:

## Ի՞նչ կերպ են որոշվում «առավել հարմարեցված պայմանները»

Հոգեկան առողջության խնդիրներով զբաղվող մասնագետները, ովքեր գիտեն շահառուների հիմնական կարիքներն ու անհրաժեշտ ծառայությունների ցանկը, պարտավոր են հստակեցնել աջակցության ձևերը: Հնարավոր տարբերակների մասին տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի: Մինչ որոշում կայացնելը ծառայություններից օգտվող

անձանց պետք է հնարավորություն ընձեռել այցելել հնարավոր համայնքները եւ ապա միայն հետո որոշում կայացնել իրենց համար առավել նախընտրելի վայրում բնակվելու վերաբերյալ:

**Ի՞նչ անել, եթե քաղաքացին անհամաձայնություն է հայտնում առաջարկվող պայմանների վերաբերյալ:**

Քաղաքացին կարող է փաստեր ներկայացնել առ այն, որ անձամբ իր պարագայում ավելի հարմար պայմաններ ունեցող վայրեր կան: Նման փաստերը կարող են լինել ինչպես համայնքային կառույցների տվյալների բազայից, այնպես էլ այլ աղբյուրներից: Քաղաքացին կարող նաեւ երկրորդ կարծիք պահանջել: Եթե մարդուն հրաժարվել են համայնքային ծառայություններ տրամադրելուց կոնկրետ ծրագրի շրջանակում, ապա նա կարող է բողոքել ծրագրի շրջանակներում գործող կանոնակարգի համաձայն: Օրինակ, եթե քաղաքացին համապատասխանում է Medi-Cal ծրագրի չափորոշիչներին, սակայն ծրագրի շրջանակներում համապատասխան ծառայություններից չի օգտվում, ապա բողոքարկման միջոցով հնարավոր է վերջինիս ներգրավել ծրագրում:

**Արդյո՞ք հոգեբուժական խնդիրներ ունեցողներին պետք է տրամադրվեն տարբերակներ**

Այո, Օլմսթեդի իրականացման ծրագրի շրջանակներում Կալիֆորնիան առաջարկեց հետեւյալ սկզբունքները

--Հաշմանդամության խնդիրներ ունեցող քաղաքացին ինքնորոշման իրավունք ունի, այդ թվում նաեւ բնակության վայրն ընտրելու հարցում

--Ապահովել սպառողների տեղեկատվական իրավունքը համայնքային ծրագրերի եւ ծառայությունների վերաբերյալ, մշակութապես ընկալելի ձևերով

--Աջակցել սպառողի համայնքային ինտեգրմանն ու ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռել

--Ծառայությունները հնարավորինս միտված են սպառողի շահերին, բոլոր տարիքային խմբերին հնարավորություն ընձեռելով ապրել համայնքում

Կալիֆոռնիայի Օլմսթեդի ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գնել այստեղ <http://www.chhs.ca.gov/initiatives/Olmstead/Documents/01Section%20I%20-%20V%20combined.pdf>

## Ի՞նչ անել, եթե անհրաժեշտ են ավելի մեծ քանակի տներ եւ համայնքային տարբերակներ

Մարդիկ կարող են աշխատել համայնքային տների եւ ծառայությունների քանակն ավելացնելու ուղղությամբ: Նահանգային եւ համայնքային մակարդակներում անհրաժեշտ է հասնել նրան, որպեսզի լինի բավարար ընտրության հնարավորություն բնակության վայրի վերաբերյալ, այս կերպ հնարավորինս նվազեցնելով ոլորտային հաստատություններում ապրելու հավանականությունը:

Հաշմանդամություն ունեցող անձինք եւ նրանց ներկայացուցիչները պետք է ներգրավված լինեն տարածքի կառուցման, ձեւավորման եւ դրա իրականացման գործընթացներում, ընդ որում ինչպես նահանգային այնպես նաեւ տեղական մակարդակներում: Մա ներառում է նաեւ գնահատման ընթացակարգերի մշակումը, որպեսզի քաղաքացիներին մատուցվող ծառայություններն իրականացվեն առավել հարմարավետ պայմաններում: Այս գործընթացում կարելու է հստակեցնել նաեւ լուծման կարիք ունեցող խնդիրների շարք, որոնց իրագործման նպատակով անհրաժեշտ կլինի նաեւ լրացուցիչ ռեսուրսների ներգրավում եւ հստակ ժամանակացույց: Գործընթացով հետաքրքրված անձինք կարող են դիմել իրենց համայնքային հոգեկան առողջության հանձնաժողովին կամ խորհրդին:

## Արդյոք կա՞ն տներ եւ համայնքներ կառուցելով շահագրգիռ խմբեր:

Այո, նման շահագրգռվածություն ունեցողների շարքում են ստորեւ նշված կառույցները.

--County Patient's Rights Advocates, այցելեք [http://www.disabilityrightsca.org/OPR/pr\\_directory.pdf](http://www.disabilityrightsca.org/OPR/pr_directory.pdf)

--Disability Rights California, գանգահարեք 1-800-776-5746 կամ այցելեք <http://www.disabilityrightsca.org>

--Հաճախորդի ինքնասպասարկման խմբեր Client Self-Help groups, այցելեք [http://www.californiaclients.org/office/client\\_run.cfm](http://www.californiaclients.org/office/client_run.cfm)

--NAMI California, գանգահարեք 916-567-0163 կամ այցելեք <http://www.namicalifornia.org/>

Մեզ համար կարևոր է Ձեր կարծիքը: Փաստերի այս շարքը կարդալուց հետո խնդրում ենք մասնակեցել մեր հարցմանը:

Անգլերեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Խարազանելը, խտրականությունը, խտրականության կրճատման եւ հաջող քաղաքականության ծրագիրը (APEDP) ֆինանսավորվում է հարկատուների կողմից հաստատված հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով եւ կառավարվում Կալիֆորնիայի առողջապահական հարցերով վարչակարգի կողմից (CaIMHSA): CaIMHSA-ը մարզային ավագանիներից բաղկացած կազմակերպություն է, որը գործունեություն է ծավալում հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներին, ընտանիքների եւ համայնքներին աջակցելու ուղղությամբ: Կազմակերպությունը մատուցում է ծառայություններ, ինչպես նաեւ կրթական ծրագրեր է իրականացնում նահանգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել <http://www.calmhsa.org> կայքը:*



WELLNESS • RECOVERY • RESILIENCE